

ԻՆՁՆ Է ՍՊԱՌՆՈՒՄ ԿՈՎԿԱՍԻՆ

«Փառք Աստուծոյ, հայ արիւնն ալ վոթեցաւ.
նւրոյ, արդեօք արեան պասքդ յագեցաւ...
Գամառ-Քաթիպա»

Գուցէ երկրագնդիս վրայ շատ քիչ գտնուի այնպիսի ան-
կիւն, որ այնքան յաճախ, այնքան առատօրէն ներկուած լինի
իւր բնիկ ժողովրդի արիւնով, որքան դժբաղդ հայի դժբաղտա-
գոյն հայրենիքը:

Պատմութեան մէջ բարբարոսի հռչակ վայելող խուժանա-
պետներէց շատերը եկել անցել են Հայաստանի վրայով, հուր
ու սուր տարածելով այդ երկրի վրայ: Չի մնացել մի քար, մի
ծաղիկ, մի անկիւն, որ կարմրած չը լինի հայի արիւնով:

Սակայն լուսաւոր աշխարհի ժամանակակից սերունդը,
հաւատարիմ արիւնով միայն վերածնելու գաղափարին, հրով
ու սրով գոյութեան իրաւունք ձեռք բերելու անողոք վարդա-
պետութեան, հայի ոչ հեռաւոր և ոչ մօտիկ պատմական
անցեալով չէր բաւականանում. նա էլ ծարաւի էր հայի ար-
եան. նա չէր հաւատում, թէ հայի երակներէ մէջ արիւն է մնա-
ցել, մի բան, առանց որի փրկութիւն չկայ և ուզում էր ան-
պատճառ իւր աչքով տեսնել, ապա թէ տալ նրա ձեռքը վերած-
նելու հասունութեան վկայագիրը:

Տեղի ունեցաւ Կարնոյ առաջին շարժումն ու կոտորածը
և մեր բանաստեղծը լաւ գիտնալով երոպական դիպլոմատիայի
արիւնարբու բնազդը, շտապեց վերոյիշեալ տողերէց կազմուած
դիսերտացիան ներկայացնել մեծ պետութեանց արեան հերոս-
ներին, որպէս ապացոյց նրա հասունութեան:

Բայց այդ կոտորածը անցեալ դարու հայ պատմութեան
յառաջաբանն էր միայն: Այնուհետեւ, կարճ անտրակտներով,
Թրքաց Հայաստանի բեմի վրայ հանդէս եկաւ բուն դրաման
իւր յուզիչ բովանդակութեամբ, հեղինակութեամբ Բերլինի

դաշնագիրն ստորագրող մեծ պետութիւններն և մասնակցութեամբ Սուլթան Համիդի:

Միայն թէ դրամայի գործողութիւնը գնալով հասաւ այնպիսի վայրենութեան, որ հանդիսատես Եւրոպան ինքը սարսափով փակեց աչքերը, երեսը դարձրեց ու պողաց—այդ արդէն չափազանց է, դա մահամերձ բռնակալութեան վերջին գործողութիւնն է, ուր թափուած անմեղ արեան լճի մէջ պիտի խեղդուի ինքը՝ բռնակալութիւնը— Թիւրքիան:

Մահմեդական ժողովրդի բարբարոսական ինստինքտներին լաւ ծանօթ հեռատեսները գուշակեցին, որ դիւանագիտութեան հեղինակած արիւնտող դրաման շատ մեծ է Թրքաց Հայտատանի բեմի համար, որ ոճրադործութեան թատերաբեմը պիտի ընդարձակուի, անցնի Մասիսի Հիւսիսային կողմը և տարածուի Սև և Կասպից ծովի ափերը, ուր նոյնքան խիտ է մահմեդական ազգաբնակչութիւնը...

Գուշակութիւնը կատարուեց: Դեռ տաս տարի չանցած այդ օրից, անս Բագուն առաջին եղաւ, որ նոյն մահմեդականներն ձեռքով ներկուեց հայ արիւնով:

Տեղի ունեցաւ այն, որի մասին արդէն խօսուեմ էր խուլ անկիւններում, բայց որին շատ քիչերն էին ստատում:

Հաս կազմուած դաւադրութեան, կարմիր մկրտութիւնը պիտի կատարուէր ուրիշի ձեռքով և ուրիշի գէնքով, սակայն ամենքի համար անսպասելի կերպով, այդ ուրիշի տեղ հանդէս եկաւ մահմեդական ամբողջը:

Այն դիմակը, որի ետն այնքան խնամքով թաքնուել էին Կովկասի մահմեդականները, պատուեց, երբ ամեն մի մահմեդականի ճակատին, առանց դասակարգի խտրութեան կարիքի էր կարդալ խորհրդանշանը այն ընդարձակ դաւադրութեան, որ սարքուած էր Կովկասի դէմ:

Բուսաստանի նախթային թագաւորութեան մայրաքաղաքում, նահանգապետի ու քաղաքապետի ներկայութեամբ, ոստիկանութեան ու դօրքի աչքի առաջն, մահմեդական ամբողջի գէնքը, չորս օր ու գիշեր փողոցներն ու տները ներկեց հարկաւոր անմեղ հայերի արիւնով:

Պարսիկ համալսին, որ գլուխը կախ քեասիբութեան ետնից էր, որ այնքան հաւատարիմ էր հային և որը օրական հացի գինը հագիւ էր ձեռք բերում, յանկարծ ինչոր կախարդական մի մատի շարժմամբ նա վեր ելաւ հայի դէմ և կախարդական մի ուրիշ մատի շարժմամբ կատարելագործուած գէնքերով զինուած սկսեց հուր ու սուր տարածել շուրջը: Մտրու-

Թիւն չը դրուեց ոչ սեռի, ոչ հասակի, ոչ դասակարգի մէջ: Մոլեգնութեամբ արբած, վայրենացած, նա ամենուրեք հայ էր որոնում սպանելու համար:

Որոշ հոգով ներշնչուած, հիպնոզացած մահմեդականների համար չը կար ոչ արդար կամ մեղաւոր, ոչ ծեր կամ մանուկ, ոչ աղքատ կամ հարուստ: Եթէ հայ է—այդ բաւական է. նա պիտի մեռնի, որպէս զի ի միջի այլոց, անարգել հաստատուի մահմեդական թագաւորութիւնը կողկասոււմ:

Թոյլ, զէնք կրելու անընդունակ, կիներն էլ մորթուում էր այնպէս, որպէս զէնք կրելու ընդունակ, բայց օրէնքով զինաթափ տղամարդը:

Նորածին երեխան էլ խողխողւում, յոշոտւում էր այնպէս, ինչպէս հասակաւորը:

Աղքատն էլ կողոպտւում և իւր տան բոցերի մէջ ողջ-ողջ խորովւում էր հարուստի նման...

Դժոխային տեսարան էր այդ, սանդարմետական հանդէս, որի հանդէպ նսեմանում են միջնադարեան բարբարոսութիւնները:

Ձինգիդ-խաների, Լէնկ-Թէմուրների և այլոց կատարած ոճրագործութիւնների կրկնութիւնն էր, միայն թէ քսաներորդ դարու քաղաքականութեամբ կատարելագործուած:

Այն ժամանակ վայրենի ամբոխի գլուխն անցած էր լիւնում գլխաւոր ոճրագործը, իսկ այժմ այդ ոճրագործը վայրենի ամբոխի ետև թագնուած, մենք չենք տեսնում, այլ գուշակում ենք:

Այն ժամանակ ասիական խուժանապետներն էին լողում մարդկային արեան մէջ, նրանով յագեցնելով իրենց վայրենի հոգու ծարաւը, իսկ այժմ...

Ովքեր էին քսաներորդ դարու խուժանապետները, որոնք միմեանցից այնքան տարբեր նպատակների համար զոհեցին հարիւրաւոր անմեղներ, որոնք մարդկային արեան մէջ լողանալու անզուսպ ցանկութիւնն ունեցան—այդ մասին լռենք, թող քարերն աղաղակեն:

Մարդու արիւնը սառչում է երակների մէջ, ուղեղը կարկամում, մազերը փշաքաղում են:

Արդեօք կը գտնուի մի մարդ, որ պատկերացնելով այդ դժոխային տեսարանը, ակամայ չը յիշի Ներոնի ժամանակները, Ներոնի յղացած անգթութիւնների ամենաանգութը:

Պօլսի հայկական ջարդը, որին հանդիսատես լինելու դժբաղդութիւն եմ ունեցել, ոչինչ է Բագուի կոտորածի համեմատութեամբ:

Բայց միայն Բագուլ, որ մոռացուելու վրայ է: Այժմ երբ գրում եմ սոյն տողերը, ամբողջ Արարատեան նահանգը նոյն դժոխային հանդէսն է ներկայացնում. գիւղացիք խուժել են գիւղացիների վրայ, քաղաքացիք քաղաքացիների վրայ, այրւում են քաղաքներ ու գիւղեր, տուն ու տեղ կողոպտւում են, անդ ու անդաստան տրորւում, ոչնչանում և ամեն մի բոցի հետ մի անմեղ հոգի է թռչում դէպի երկինք, ամեն մի մոխրակոյտի տակ ծեր ու մանուկ թաղւում, ամեն մի քար ու անկիւն մարդկային արիւնով ոռոգւում, կարմրում:

Կարելի է միթէ Պօլսի կոտորածը համեմատել Կովկասի կոտորածի հետ:

Բանն ի հարկէ զոհերի թուի մէջ չէ, որովհետև եթէ Կովկասի հայերը ուղեւային ոչխարի նման մորթուել, աւելի մեծ զոհ կը տային: Տարբերութիւնը նրա մէջ է որ Մեծ-Ոճրագործը իւր օրհասական կատաղութեան բոպէում իսկ կանանց ու երեխաներին խնայեց:

Ակամայ հարց է ծագում, ի՞նչ տարբերութիւն կայ Մասիսի այն և այս կողմի երկրները հայ արիւնով ներկող մահմեդական ամբոխների միջև:

— Ոչինչ... գիտակցութիւնը երկուսի մէջ էլ բացակայ է, իսկ ինստինքտը վայրենի, գաղանային:

Շատ քիչ զանազանութեամբ, ամենուրէք ամբոխոն ամբոխ է. նա ներկայացուցիչն է մարդկային ցեղի նախապատմական անցեալի իւր բոլոր վայրենական բնազդներով: Որքան խոր է ամբոխի տգիտութիւնը, որքան անհաղորդ է նա մարդուն վերաշինող քաղաքակրթութիւնից, այնքան նա մօտիկ է վայրենութեան և այնքան բուռն նրա մէջ գաղանային յատկութիւնները:

Բայց կան արտաքին հանգամանքներ, որոնք սանձահարում են ամբոխի վայրենի կրքերը, վայրենի հակումները, դարձնելով նրան ոչ միայն անվտանգ, այլև որպէս օգտակար տարր մարդկային դասակարգի մէջ: Դրանց մէջ առաջին տեղը բռնում են այն բաները, որոնք երկիւղ են ներշնում պմբոխին: Երկիւղն ամբոխին զսպում է ճիշտ այնպէս, ինչպէս շիկացած երկաթը վագրին ու առիւծին: Պատժական օրէնքի ծագման և նրա նշանակութեան մասին գաղափար չունենալով հանդերձ, ամբոխը վախենում է այդ օրէնքից, որպէս գաղանները չը գիտնալով հանդերձ թէ ի՞նչ է շիկացած երկաթը, վախենում են նրանից, որովհետև նրա հպաւորութիւնը ֆիզիքական ցաւ է պատճառում:

Որքան անկաշառ է իշխանութիւնը, որքան խիստ դէպի ամենայն տեսակ օրինազանցութիւնները, այնքան մեծ ու խոր է նրա թողած ազդեցութիւնը, նրա ներշնչած երկիւղը:

Պարսկաստանի մահմեդական ամբօլը, որի համար հայ տարրը ջնջելը մի քանի ժամուայ դործ է, շնորհիւ Իրանի կառավարութեան բացառիկ ու խիստ օրէնքների, բուռն հայերը ոչ միայն կարողանում են աներկիւղ ապրել, այլ և վայելում են նոյն ամբօլի համակրանքը:

Ուրեմն որպէս Թիւրքիայում, նոյնպէս և Ռուսաստանում, որոնք իւրացրել են երոպական կարգերը և ապրում են եւրոպական հովերով, ամբօլը հնարաւորութիւն չը պիտի ունենար իւր վայրենի բնազդներն ի յայտ բերելու, չը պիտի համարձակուէր իշխանութիւն և օրէնք կոչուած զառազիղի վանդակներից հնկելով, անպատիժ կերպով քաղաքներ ու գիւղեր ողողելու մարդկային արիւնով:

Բայ այդ տեղի ունեցաւ և շարունակուեմ է մինչև այսօր այն տարբերութեամբ միայն, որ մի տեղ խտրութիւն է դրուեմ սեռի ու հասակի մէջ, միւս տեղ՝ Կովկասում թաց ու չոր այրւում են միասին:

Մեր կարծիքով, այս տարբերութիւնը չը պէտք է որոնել Մասիսի այս ու այն կողմում ապրող և աւերող ամբօլի աշխարհայեացքի մէջ: Նա որ զուրկ է գիտակցութիւնից, զուրկ է և աշխարհայեացքից:

Բայց գիտակցութիւնից, ինքնուրոյնութիւնից զուրկ ամբօլը մի պատրաստի զէնք է ճարպիկ մարդկանց ձեռքում, որին կարելի է ամեն կողմ դարձնել, ամեն բան կատարել տալ առանց մեծ ռիսկի:

Պատմութիւնից գիտենք, որ ամբօլ կոչուած զէնքով ազգեր են կործանուել և ազգեր վերածնել, նայելով թէ ովքեր են եղել նրան առաջնորդողները և ինչ նպատակով:

Ուրեմն, և թէ Թիւրքիայում ամբօլը կանանց ու երեխաներին խնայեց, եկեղեցիները չը պղծեց, խաչ ու աւետարանը չը գողացաւ, այնինչ Կովկասում նոյն ամբօլը այս բոլորը կատարեց ամենամեծ չափով—այդ նրանից էր, որ ամբօլի մէջ պատենաւորուող վայրենի բնազդ կոչուած զէնքի գործածողները այնտեղ և այստեղ առաջնորդուել են քաղաքական տարբեր նպատակներով, տարբեր աշխարհայեացքով:

Մենք գիտենք արդէն, թէ ի՞նչու իշխանութիւնից ու օրէնքից այնքան վախեցող մահմեդական ամբօլը, յանձին լազերի, չերքիզների, քիւրդերի, թիւրքերի և այլ խաժամուժնե-

բի, ամբողջ Թրբաց Հայաստանը, նոյն իսկ Թրքական մայրաքաղաքը ներկեց հայի արիւնով ու անպատիժ մնաց:

Սակայն ո՞վ քաջութիւն ունի ասելու, թէ ի՞նչ նպատակներով նոյն հայի արիւնով ներկուեցին Բագուի փողոցները, ինչո՞ւ Արարատեան երկրի քաղաքներով ու գիւղերով հայ արիւնը ջրի նման է հոսում, կողոպտում հայի գոյքն ու ինչքը, տուն ու տեղը կործանւում, արտն ու այգին ոտքի կոխան դառնում... Ինչու մահմեդական ամբոխը ազատ համարձակ պղծում բրիտանոնական եկեղեցին, սրբութիւնները թալանում ու ծաղրում, և բրիտանոնայ մի հզօր պետութեան մէջ, նրա ներկայացուցիչների ու պաշտօնեաների աչքի առջև բռնի մահմեդականացնում է բրիտանոնայ ժողովրդին...

Ո՞վ կարող է գուշակել, թէ ու՞րե՞ր գինեցին մահմեդական ամբոխին, զարթեցրին նրա մէջ քնած վայրենի կրքերը և յարուցին նրան յատկապէս հայի դէմ խնամքով կազմած որոշ ծրագրով... Կամ թէ ո՞վքեր էին այն հրէշները, որ մարդկային թշուառութեան, ընդհանուր լաց ու սուգի, ոգևորքի ճիչ ու հառաչանքների գնով ուղեցին հասնել իրենց նպատակին...

Այո այս հարցերին պատասխանելու հնարաւորութիւն չունինք առ այժմ: Սակայն մեզնից հեռու, բարձրագոյն շրջաններում և պալատական պատերի մէջ կարծես ինչ-որ մի բան է դառնում, որի հետեանքն է այն սենատական քննութիւնը, որ նշանակուեցաւ Բագուի արիւնալից դէպքի քննութեան և լուսաբանութեան համար: Արդեօք կը քննութեն նաև Արարատեան նահանգի¹⁾ արիւնալից դէպքերը—գուցէ. այն ժամանակ կը պարզուի մի քանի մութ և խիստ կասկածելի զուգադիպութիւններ:

ա) Որ զուգադիպաբար Նախիջևանի հայերի կեանքն ու գոյքը մահմեդական խուժանի ձեռքը մատնուեց այն ժամանակ, երբ Նախիջևանի խանը Երևանի նահանգապետի օգնականի հետ միասին ամեն կերպ ապահովեցնելով հայերին, ստիպում էին, որ իջնեն փողոց, խանութները բանան, իրենց առևտուրը շարունակեն...

բ) Այն ժամանակ, երբ Նախիջևանի դրութիւնը դառնում է այնքան կրիտիքական, այնքան սպառնական, որ նահանգապետի օգնականի ներկայութիւնը անհրաժեշտ է դատուում,—այո՛ այդ սպառնական օրում, զսւգադիպաբար տեղային զօրքը ուղարկուած է լինում քաղաքից շատ հեռու գինափորձի...

գ) Խուժանը շրջապատում է մի հայ գիւղ, զօրք է զրկ-

¹⁾ Այժմ կարելի է ասել՝ ամբողջ Գովկասի: ԽՍՀ.

ւում պաշարուածներին օգնելու և դեռ կուռի չը բռնուած կամ հաղիւ թէ կուռի բռնուելով խուժանի հետ, զուգադիպաբար փամփուշտները վերջանում են և զօրքը յետ է քաշուում, գիւղը խուժանի կատաղութեան մասնելով...

դ) Մի տեղ զօրքին յաջողուում է գիւղի վրայ յարձակուող մահմեդական խուժանին յետ մղելով, նրանցից էլ քառասուն հոգի գերի վերցնել. սակայն չը գիտես ինչ տարօրինակ զուգադիպութեամբ գերի բռնուածներից երեսուն և ինը հոգին դուրս են գալիս անմեղ գառնուկներ և ազատ են թողուում, մէկը միայն բանտարկուում է, այն էլ զուցէ մի ուրիշ զուգադիպութեան շնորհիւ մի քանի օրից ազատուելու պայմանով:

ե. Երեւանի նահանգի, մանաւանդ Նախիջևանի գաւառի յուզմունքն այնքան սաստկանում է, որ փոխարքան անհրաժեշտ է համարում մի անկաշառ զօրապետի հրամանատարութեամբ զօրք ուղարկել անկարգութիւնների վայրը և զուգադիպաբար զօրքի հրամանատարը դուրս է գալիս մահմեդական և այն էլ Նախիջևանի խանի փեսան...

Այս Բագուի և Արարատեան երկրի արիւնալից դէպքերի հետ կապուած են շատ անհասկանալի զուգադիպութիւններ, որոնց պարզուելով հոյակապ խարդաւանքներ պիտի երևան գային, որի համար իսկ երեւի նշանակուած է սենատական քննութիւնը: Ուրեմն թողնելով, որ քննիչները ճշմարտութեան մախաթը որոնեն տուպրակի մէջ, որպէս ասեղը ծովում, մենք շարունակենք առաջ գնալ:

Բագուի արիւնալի ընդհարումից անմիջապէս յետոյ, հեռագրական լուրեր երեացին, որոնք Հայ-մահմեդական ընդհարումները բացատրում էին այդ երկու ազգերի մէջ եղած դարաւոր ատելութեամբ, ուր իհարկէ առաջին տեղը տրւում էր կրօնական ատելութեան: Ոսք եղաւ նաև տնտեսական և այլ յարաբերութիւններն մասին... Սորհրդաւորն այս դէպքում այն էր, որ հեռագրական գործակալութիւնը իւր տեղեկութիւնները քաղում էր «Kacni»-ի խմբագրատնից կամ աւելի ճիշտն ասած, նրանք թիւում էին նոյն այդ խմբագրատան մէջ: Այս բանը մի լաւ ապացոյց է, որ հեռագրական գործակալութեան թղթակցի թիկունքին թափուած գործում էր Բագուի մահմեդական ինտելիգէնցիան և զուցէ ուրիշ հեղինակաւոր անձնաւորութիւններ էլ, որոնք ինչպէս երևում է, շատ կը ցանկային, որ կրօնական դարաւոր ատելութիւնը որպէս միակ պատճառ Բագուի արիւնհեղութեան, հալած իւղի տեղ ընդունուէր: Այդպիսով արիւնալից դէպքի իսկական յանցաւոր-

ները պատասխանատուութիւնից ազատուելով հանդերձ, ծածկուում էր նաև նրա կրկնակի նպատակները:

Սակայն անաչառ մամուլը շտապեց հերքել այդ կարծիքը՝ այնքան ծանրակշիռ փաստերով, որ մահմեդական ժողովրդի ներկայացուցիչները, լուրերի ստույգեան մէջ բռնուած, շտապեցին իրենք էլ պնդել, որ հայ և մահմեդական տարրերի մէջ գոյութիւն չի ունեցել ոչ մի տեսակ ատելութիւն:

Այդ հերքումը կատարուեց հրապարակօրէն, քաղաքային խորհրդարանի դահլիճում, հաագին բազմութեան առաջ, ուր ներկայ էր և նահանգապետը և քաղաքագլուխը:

Բայց եթէ մահմեդականները լռէին նոյն իսկ, իրական փաստը ինքը պիտի հերքէր տենդենցիօզ լուրերը: Կովկասը նախ քան ռուսաց ձեռքն անցնելը, նրան տիրապետում էր պարսիկը: Եթէ գոյութիւն ունենար կրօնական ատելութիւն, չը գիտենք ի՞նչն էր արգելում մահմեդական խուժանին հենց այն ժամանակ իրենց ատելութեան յագուրդ տալու համար կոտորել հայերին: Սակայն այն ժամանակ էլ Բագուի դէպքի նման մի բան տեղի չի ունեցել, իսկ Կովկասը ռուսաց ձեռքն անցնելուց յետոյ հայ ու մահմեդական ապրել են բարի դրացիների նման, բաժանելով միմեանց մէջ կեանքի թէ քաղցրութիւն, թէ դառնութիւն, թէ յաջողութիւն և թէ անյաջողութիւն: Ինչ վերաբերում է տնտեսական հարցին, այդ երկու ազգերի ճակատագրերը շատ միանման են. երկուսն էլ գտնուում են միատեսակ ծանր պայմանների մէջ, կեանքի անբնական դրութիւնը քայքայում է երկուսին էլ, այսպէս որ մէկը միւսին նախանձելու պատճառ չունի: Իհարկէ այդ երկու ազգերի մէջ կան բազմաթիւ անհամոտներ, սակայն մահմեդական ամբոխը զէնք չէր առնիլ և հարիւրաւոր անմեղ հայերի չէր կոտորի ոչ էլ հայը նոյնը կանէր նորա համար, որ հայերի և թուրքերի մէջ մի քանի միլիօնատէրներ կան:

Հերքելով դարաւոր կամ նոյն իսկ նորարծարծ ատելութիւնը հայ և մահմեդական տարրերի միջև և ի նկատի առնելով այդ երկու ցեղերի բարի յարաբերութիւնները մինչև վերջին օրերը, ակներև է դառնում, որ կային մահմեդական ամբոխի վայրենի կրքերը զրգոողներ հայերի դէմ և թէ այդ կոյր զէնքով օգտուողները առաջնորդուել են քաղաքական որոշ նպատակներով:

Այս հարցի մասին խօսած ժամանակ, շատերը մատնացոյց են լինում երկու հանգամանքի վրայ, նախ՝ տեղական իշխանութեան բռնած ղերքը հայերի նկատմամբ և հայակեր մա-

մուլի յարուցած ամբաստանութիւնները և երկրորդ՝ ժամանակի տրամադրութիւնը, այն վերանորոգչական հոսանքը, որ անցնում է լայնատարած Ռուսաստանի մի ծայրից միւսը:

Այս ենթադրութեան մէջ կայ որոշ չափի ճշմարտութիւն. առաջին անգամը չի, որ մութ տարրերը հանգամանքներից օգտուելով մեծամեծ աղէտներ են բերել ժողովրդի գլխին. քիչ չի պատահել, որ որոշ անձնաւորութիւններ, օգտուելով ամբոխի գաղաւթային տրամադրութիւնից, առաջնորդել են ներքան հակառակ ուղղութեամբ...

Բաւական տարիներ են, որ Ռուսաստանում բիւրօկրատիան անողորմ կռիւ է մղում դէմօկրատական դաւանանքի դէմ և այդ կռուով այսօր բռնկուած է ամբողջ Ռուսաստանը: Մենք գիտենք, որ տեղական իշխանութիւնը, մանաւանդ Ռուսաստանի ծայրերում, խիստ անհաշտ դիրք է բռնել այն բոլոր հպատակ ազգերի ու ցեղերի վերաբերմամբ, որոնք տրամադրութիւն են ցոյց տալիս յարելու դեմօկրատ կուսակցութեան: Հայը, որ իւր ազգային և եկեղեցական կաղամկերպութեամբ միշտ եղել է և է դէմօկրատ, չէր կարող իւր համակրութիւնը չը ցոյց տալ Ռուսաստանի վերանորոգչական շարժման նկատմամբ, մանաւանդ որ վերջին մի քանի տարում նա կրեց այնպիսի զրկանքներ ու հալածանքներ, որին երբէք արժանի չէր եղել նա:

Ծառպիկ մարդկանց համար սա արդեօք մի գեղեցիկ առիթ չէր, որ մահմեդական ամբոխին զինելով հայերի դէմ, նրանց մէջ նկատուող իբր թէ հակառակաբանական շարժումը խեղդելու պատրուակի տակ, անարգել իրագործէին իրենց նպատակները, թէև դրանք ոչ մի առնչութիւն չունենային Ռուսաստանի քաղաքականութեան հետ: Ի՞նչու չը պնդել, որ մահմեդական ամբոխին ղեկավարողները, տեղական իշխանութեան տրամադրութիւնն ի չարն են գործ դնում յօգուտ մի այլ նպատակի:

Կամ ինչու աւելի պարզ չասենք, որ այդ նպատակը համալսականութեան ծրագրի գործադրութիւնն է, այն է— անջատել Կովկասը յօգուտ Թիւրքիայի...

Հերքելով հայերի և մահմեդականների մէջ գոյութիւն ունեցող ատելութիւնը, թէ Բագու և թէ Նրևանում, մահմեդականների ներկայացուցիչները շատ հետաքրքիր առարկութիւններ արին, բայց այնքան միամիտ ձևով, որ մամուլի ուշադրութիւնից վրիպեց: Այն ինչ ներկայ արիւնոտ դէպքերի բուն գաղտնիքը մինք գտնում ենք հենց այդ միամիտ առարկութիւնների մէջ:

Մեր ընթերցողները յիշում կը լինեն, որ Բագուէ մահմեդական տուղերը մի կողմից իրենց հաւատակիցներէ գործած բարբարոսութիւնները արդարացնելու, միւս կողմից մահմեդականութեան ըուն նպատակը թագցնելու համար, առաջ քաշեցին հայ յեղափոխական կոմիտէներէ գոյութեան հարցը, իսկ երևանում մատնացոյց արին Թրքահայ գաղթականներին...

Միամիտ պէտք է լինել չիմանալու համար, որ յեղափոխական կոմիտէները, եթէ գոյութիւն իսկ ունին, չէին կարող գործ ունենալ Կովկասի մահմեդականներէ հետ: Ի՞նչ կապ, ի՞նչ յարաբերութիւն այդ երկուսի, մանաւանդ յեղափոխութեան և մահմեդական ամբոխի միջև, որ կարողանար զրգռել և յարուցանել նրան հայերի դէմ...

Հարցրէք երևանի մահմեդականներին թէ ի՞նչ վատութիւն, ի՞նչ վնաս են կրել Թրքահայ գաղթականներից, որոնք օսմանն բարբարոսութիւններից մազապուրծ, ապաստան են գրտել Կովկասում, բայց որոնք գիշեր ու ցերեկ իրենց սիրուն վաթանն են երազում, այդ վաթանի քաղցր օդն ու ջուրը երգում, պապերի շիրիմները ողբում...

— Ոչ ի՞նչ:

Նայելով «Каспий»-ում հրատարակուած լուրերին, հայերը ապստամբուել են Ռուս իշխանութեան դէմ, նրանք ուզում են Կովկասը Ռուսաստանից անջատելով առանձին հայկական թագաւորութիւն ստեղծել և այս բանը գրռել է հաւատարիմ մահմեդական ամբոխին և զրգռուած մահմեդական ամբոխը դրա համար էլ կոտորում է անհաւատարիմ հայերին...

Մոլեռանդ և կրօնամոլ մահմեդական հաժարու և չայչի-խանաների լօթի-փօթիների մէջ այնքան լայն, անձնուրաց հաւատարմութիւն դէպի Ռուսաց գահը, որ տասնեակ տարիներէ ընթացքում շարունակ խուզել է մահմեդական Թիւրքիայի պետութեան երկրները. և յաղթական արձան կանգնեցրել Մայրաքաղաքի սրտի վրայ—Սան-Ստէֆանօում...

Հաւատում էք, ընթերցող:

Թէ՞ դուք էլ արդէն գուշակում էք, որ այդ հաւատարմութիւնը մի ֆօկուս է, մի կից փողի, մի քաղաքական խաղ, որով մահմեդական պարագլուխներն ուզում են կուրացնել ում հարկն է և անարգել յառաջ տանել համիլլամութեան քաղաքական ծրագիրը:

«Քաղաքական խաղ» խօսքը կարող է մի քիչ անհամապատասխան, մինչև անգամ անբնական երևալ այն պատճառով, որ Կովկասի մահմեդականները թէ կուլտուրական և թէ տնտես-

սական տեսակէտից աւելի ազատ լինելով քան Պարսկաստանի և Տաճկաստանի մահմեդականները և համեմատաբար աւելի արտօնուած, քան Կովկասի միւս ցեղերը, առերևոյթաւ, գէթ մեր աչքով նրանք հանգամանքների հետ հաշտուած են երևում, որով նրանք Ռուս-Կովկասեան քաղաքականութիւնից դուրս ուրիշ քաղաքակրթութիւն ունենալ չեն կարող:

Այս կարծիքը, որ մենք կազմած ենք եղել Կովկասի մահմեդականների մասին, գլխովին սխալ է, որպէս սխալ է Կովկասի հայերի մասին կազմած կարծիքը, իբր թէ նրանք սեպարատիքական ձգտումներ ունին:

Պետերբուրգի կառավարութիւնը պէտք է որ շատ լաւ ճանաչէր թէ հային և թէ մահմեդականին և պէտք է գիտենար, որքան մեծ տարբերութիւն կայ այդ երկու ցեղերի աշխարհահայեացքների միջև, թէ որը դրանցից վտանգաւոր է քաղաքական տեսակէտից, որն օգտակար կուտուրական ասպարիզում:

Այս բանը գիտնալու համար իմաստուն լինելու պէտք չը կայ. բաւական է կողք կողքի դնել հայ և մահմեդական տարբերը. քննել և կշռադատել նրանցից իւրաքանչիւրին շրջապատող պայմանները, որոնք կարող են զարթեցնել կամ խեղտել սեպարատիքական գաղափարները:

Կեանքի մէջ լաւ պայմաններ ձեռք բերելու, գոյութեան կուռւմ պատուաւոր տեղ գրաւելու ձգտումը, տենչանքը չը պէտք է սեպարատիզմի հետ շփոթել: Ուրիշ բան է հալածանքները, ապօրինութիւնները. ինչքի և իրաւունքների յափշտակութիւնները վերացնելու ձգտել, թէկուզ կուռելով հալածիչների, հարստահարիչների և բռնակալների դէմ, ով և կուզեն լինեն նրան, ուրիշ բան է կուռել պետութիւնից անջատուելու համար:

Առաջինը կոիւ է կուտուրական հողի վրայ, երկրորդը սեպարատիքական կոիւ է:

Մի յետադարձ ակնաբլի ձգենք կեանքի այն աստիճանների վրայ, որով անցել է հայը Ռուսաստանը Կովկասին գրաւելուց ի վեր և տեսնենք թէ կան առիթներ, որոնք դրդէին ներան ուսական տիրապետութիւնից ազատուելու:

Աւելորդ է յիշել այն ստրկական և անարգ լուծի մասին, որ կրել է հայը մահմեդական տիրապետութեան շրջանում: Թրքաց Հայաստանի հայերի կրած տառապանքները բաւական են բնորոշելու Կովկասի հայերի կրած տառապանքները զանազան խանութիւնների օրերով: Բաւական է ասել, որ հայը պարս-

կական խաների անարգ լուծը թօթափելով, Ռուսաստանի ազատարար հովանու տակ միայն ազատ շունչ առաւ։ Այն դերը, որ նա կատարեց ստրկութեան լուծը թօթափելու գործում, Պետերբուրգի կառավարութիւնից անուշադիր չը մնաց։ Թողնենք Արարատեան աշխարհի ինքնավարութեան վարդապոյն խոստովը, Եկատերինէ կայսրուհու կազմել տուած ծրագիրը և այն որոնք ինչ-ինչ պատճառով իրականութիւն չստացան, յիշենք միայն այն, որ Պետերբուրգի Թագակիրներէից սիրուած, նրանց հրովարտակներով քաջալերուած, հայը շուտով մոռացաւ ինքնավար Հայաստանի գաղափարը և անձնատուր եղաւ իւր տնտեսական ու կուլտուրական զարգացման գործին։ Նրա կուլտուրական ընթացքի առաջն արգելքներ յարուցանող չը կար, չը կային նաև նրա աշխատանքը, գոյքը, յափշտակողներ։ Եւ աստիճանաբար առևտուրն սկսեց զարգանալ, արհեստները ծաղկել, երկրագործութիւնը բեղմնաւորել։ Սրանց հետ զուգընթաց, բացուեցին դպրոցներ, լոյս տեսան հայերէն թերթեր, հիմնուեցին մարդասիրական, բարեգործական, հրատարակչական և այլ ընկերութիւններ, միշտ Պետերբուրգի կառավարութեան հաճութեամբ ու քաջալերութեամբ։

Երբ մի ազգի ազատ իրաւունք է տրուում գոյութեան կուռի մէջ իւր ոյժերի ներած դիրքը զրաւելու, երբ կեանքի մրցութեան ասպարիզում նրա ձեռք ու ոտքը չեն շղթայում — նա դժգոհ լինելու իրաւունք չունի։

Եւ հայը երբէք դժգոհ չի եղել, ընդհակառակը յարգելով հպատակութեան բոլոր օրէնքները, նա գլուխը քարշ, հալալ աշխատանքով բրտնած միշտ ձգտել է դէպի տնտեսական, մշտաւոր ու բարոյական բարեկեցութիւնը։ Եւ որպէս տոկոսիք կառավարութիւնից վայելած արտօնութիւնների, շնորհների ու խրախուսանքների, նա կառավարութեան տուել է նշանաւոր պետական մարդիկ, նշանաւոր զօրապետներ, պատերազմների դժուարին ըրալէներում հասցրել է իւր նուաստ օգնութիւնը, ձգել է իւր ջնջին լուսման, որոնք արձանագրուած են պատմութեան անջնջելի էջերում։

Բարձրագոյն կառավարութեան բարեհաճ տրամադրութիւնը միմիայն հայերով չէր սահմանափակուում։ Նոր նուաճուած երկրի բոլոր բնակիչներն անխտիր վաւելում էին միեւնոյն շնորհը։ Տարբերութիւնը նրա մէջ էր, որ հայերը աւելի ընդունակ գտնուելով կուլտուրական ասպարիզում և աւելի աշխատասէր ու եռանդուն միւս ասպարէզներում, աւելի մեծ չափով օգտուեց յիշեալ արտօնութիւններով, քան մնացած միւս ազգերը։ Եւ

սրանով եթէ մի կողմից շարժեց այդ միւսների չար նախանձը, որ վերջը այնքան կորստաբեր հետեանքներ ունեցաւ, միւս կողմից աւելի կարեւորութիւն ստացաւ յաշի Պետերբուրգի կառավարութեան:

Այն ժամանակուայ Բարձրագոյն իշխանութեան քաղաքականութիւնը գոնէ Կովկասի վերաբերմամբ կարելի է բնորոշել այսպէս.

«Ամեն որ ազատ է ապրելու, քաղաքակրթուելու և մարդկային հասարակութեան մէջ գրաւելու այն տեղն ու դիրքը որպիսի տեղ ու դիրք գրաւելու օժտուած է նա նախախնամութիւնից»:

Այս արդէն բաւական էր: Նոյն իսկ այժմ Ռուսաստանի բազմացեղ ու տարբեր կրօնի պատկանող հպատակները ուրիշ բան չեն պահանջում, բայց միայն խղճի ու խօսքի ազատութիւն, իրաւունք ապրելու, գործելու, յառաջադիմելու այն չափով, որ չափով մի անհատ կամ մի ազգ ընդունակ է. գոյութեան կռուի հրապարակում վերացումն ամեն տեսակ սահմանափակումների ու խտրութիւնների յօգուտ մի և ի վնաս միւս անհատի կամ ազգի...

Բայց յանկարծ Պետերբուրգի կառավարութեան և նրա հպատակ հայ ժողովրդի միջև սև կատու անցաւ: Փչեց քաղաքական խորշակը, Ռուսաստանի մթնոլորտում լոյս ընկան հայակեր բացիւններ: Սկսուեց հալածանք, բռնութիւն և ճնշում հայերի դէմ: Այն բոլորն ինչ որ արտօնուած էր Պետերբուրգի գահակալներից, նրանցից դուրուած, քաջալերուած—ճանաչուեցին վնասակար: Եւ ժողովրդի անդուլ աշխատանքով և զոհաբերութիւններով գլուխ բերուած հաստատութիւնները մէկը միւսի ետևից կործանուեցան: Փակուեցին դպրոցները, որք թողնելով հազարաւոր երկսեռ մանուկներ, բարեգործական, մարդասիրական և հրատարակչական ընկերութիւնները, համարեա թէ դադարեցին և մամուլը ենթարկուեց բացառական հալածանքների: Հայակեր բացիւնները հանդիպելով լաւ պայմանների, սկսեցին ամենաանգութ կերպով կոծոտել հայի կենսունակութեան բոլոր տարրերը: Բանը յայտնող հասաւ, որ հայակերները կառավարութեան առաջ հայերին ներկայացրին որպէս սեպարատիստներ, չը քաշուելով նոյն բանի մէջ էջմիածնին ու Կաթողիկոսին ևս ամբաստանելու:

«Պէտք է հայերին բռնի ուսուցանել, պէտք է քանդել էջմիածինը, որ հանդիսանում է որպէս բոյն սեպարատիզմի»:

Ի հարկէ շատ ծիծաղելի էր, որ հզօր Ռուսաստանը իւր

միլիոնաւոր հրացաններով, սուլիկներով ու թնդանօթներով իւր փրկութիւնը, իւր ապահովութիւնը մի բուռն հայերի ուսացման մէջ էր որոնում: Սակայն ի նկատի պէտք է ունենալ, որ շատ անգամ ամբողջ կայսրութիւնը խաղալիք է դառնում մի քանի անհատների ձեռքում, որոնց ողորմելի գլուխը ծիծաղելի ծրագիր է յղանում:

Որպէս զի հայը աւելի սև երևար կառավարութեան աչքին, նրա կողքին արհեստական կերպով հանդէս բերուեցաւ հովկասի մահմեդականութիւնը որպէս միակ հաւատարիմը ուսաց գահին, իւր բոլոր քնքոյզ զգացմունքներով դէպի Ռուսաստանը, իւր բարոյական, մտաւոր ու կուլտուրական խոշոր-խոշոր ընդունակութիւններով, որոնք իբր թէ մնում են խեղդուած շնորհիւ հայերի նուաճողական սխտեմի: Եւ մահմեդականութեան լաւագոյն մասը անտես առնուելով, նախկին սիրիական աւագակները, միլիոնատէր համբաւները և Պարսիկի կամ Պետերբուրգի խոհանոցներում սնուած ինտելիգենտները արժանացան պատիւների, աստիճանների ու շքանշանների...

Սա դերերի արհեստական փոփոխումն էր, որով ուղեցին շանթահաբել մէկի արժանապատուութիւնը, շոյել միւսինը: Այդպէս վարուողները առաջին անգամ լինելով ուղեցին մահմեդականութիւնը որպէս զէնք գործածել հայերի դէմ: Նոյն փորձն արեցին և վրացիների վրայ, բայց որովհետև վրացիք քաղաքական յետին մտքեր չունէին և չէին կարող ունենալ, ինչպէս մահմեդականները, շուտով սթափուեցին: Այդ սթափումը բաւական եղաւ, որ նրանք միանգամից հասկանային իրենց շուրջը սարքուող դաւադրութիւնը:

Բայց մահմեդականները թէև անշուշտ հասկանում էին, թէ ինչ խաղ են ուղում խաղալ իրենց միջոցով, ախուսենայնիւ այդ այնքան ձեռնտու էր իրենց, որ յօժարակամ գործիք դարձան:

Սկսուեց զրպարտութիւնների շրջանը. դուրս եկաւ, որ հայերը փաստօրէն տիրապետել են հովկասին, որ առևտրական ասպարիզում ստրկացրել են մահմեդականներին ու վրացիներին, որ յափշտակել են նրանց կալուածքները, մինչև անգամ վրացոց եկեղեցիները և ծանր տոկոսներով խեղդել ամբողջ ազգաբանակութիւնը: Եւ յետոյ դուրս եկաւ որ հայ ազգը միլիարդներ է դիզել, ռազմավթերը պատրաստել ապագայ Հայաստանի բարտէսը մշակել և յարմար առիթի է սպասում, որ պարզի ապստամբութեան դրօշը... Վերցրէք «Нов. Врем.»-ն, «Моск. Вѣд.»-ն «Кавказъ»-ը և ուրիշ այս կարգի ուսմ թեր-

թերը և դուք այնտեղ այս մաքուլ հրատարակած բազմաթիւ-
թղթակցութիւններ և խմբագրական յօդուածներ կը տեսնէք՝
որոնց նպատակն ուրիշ բան չէր, բայց միայն Կովկասեան ազ-
գութիւնների մէջ թշնամանք սերմանել և հայի որպէս միակ
կուլտուրական տարրին վարկաբէկ անել:

Եւ չար ողբիները հասած իրենց նպատակին վտանգի են-
թարկելով ոչ միայն հայի կեանքն ու գոյքը, այլև ամբողջ Կով-
կասը: Ոչ ոք չուզեց քննել հային շրջապատող պայմանները,
որոնք բարձրաձայն բողոքում են նրա վրայ բարդուած բոլոր
մեղադրանքների ու ամբաստանութիւնների դէմ:

Ընդհակառակը Ռուսաստանը Կովկասին տիրապետելուց
և երկրի սահմանները ի վնաս մահմեդական պետութիւնների
աստիճանաբար ընդարձակելուց յետոյ տեղի ունեցան այնպի-
սի ակնյայտի դէպքեր, երբ արդարն ու մեղաւորը, օգտակարն
ու վտանգաւորը, հաւատարիմն ու անհաւատարիմը չը տեսնե-
լու համար պէտք էր թէ աչքով և թէ մտքով կոյր լինել:

Աւելի պարզ խօսենք: Կովկասեան ցեղերի մէջ եթէ եղել
է և կայ մէկը, որ սեպարատիքական միտումներ ունի, և ձգ-
տել է ու ձգտում է Ռուսաստանից ազատուելու, այդ մէկը
Կովկասի մահմեդականն է:

Վերն ասացի, որ հայ և թուրք տարբերի բաղադրական
աշխարհահայեացքների մէջ եղած տարբերութիւնը հասկանալու
համար, բաւական է նրանց կողք կողքի դնել:

Նախ վերցնենք հային: Խնչ է ներկայացնում նա, ինչ
պայմանների մէջ է գտնուում:

Որքան քրքրում եմ երկրադնդիս վրայ ապրող ազգերի
ցանկը, չեմ գտնում այնպիսի մէկը, որ լինէր հայի նման որք,
անտէր, անպաշտպան և ամենից մերժուած, ամենքից լքուած:
Ամբողջ մարդկային սեռի մէջ նա ապրել է ու ապրում է միայ-
նակ. չունի ոչ ազգակից, ոչ արիւնակից և ոչ կրօնակից, որի
վրայ դնէր իւր յոյսը, որին ապաւինէր: Նա որպէս հայ դա-
րերից ի վեր ենթարկուել է ոչ միայն դրացիների, այլև հեռա-
ւոր ազգերի ու ցեղերի հալածանքներին, իսկ որպէս քրիստո-
նեայ նա նոյնքան շատ է հալածուել քրիստոնեայ Հռովմից ու
Բիւզանդիայից, որքան և ոչ քրիստոնեաներից: Բայց եթէ
հարց լինի կրօնական ատելութեան մասին, կասենք որ այն
խորին ատելութիւնը, որ նա տածել է դէպի նախկին քրիստո-
նեայ Յունաստանը, նոյն ատելութիւնը չի ունեցել դէպի ոչ
քրիստոնեայ Պարսկաստանը: Եղել են դէպքեր, երբ կրիտիքա-
կան ըրպէներում հայը իւր աղերսալից նայուածքը դարձրել է

դէպի քրիստոնեայ եւրոպան, հայցել է նրա օգնութիւնը, պաշտպանութիւնը. սակայն նրան այդ բանն անել տուողը ուրիշ բան չի եղել, եթէ ոչ այն մարդասիրական դիմակը, որը շատերի հետ միասին խաբել է և հային:

Մի ազգ, որ իւր թիկունքին կանգնած շատ ու քիչ հզօր պաշտպան չունի, խելագուրկ լինելու է նա, որպէս զի մտածի զէնք առնելու Ռուսաստանի դէմ, նրանից ազատուելու փորձեր անի, որի հանդէպ ինքն այնքան փոքր, այնքան տկար ու թոյլ է, որ կարելի չէ համեմատութիւն անգամ գտնել:

Այժմ վերցնենք Կովկասի մահմեդականին:

Դեռ չի անցել մի դար, երբ մահմեդականները տիրապետում էին Կովկասին: Անշուշտ ոչ մի մահմեդական դեռ չի մոռացել այն հարուածները, որ Ռուսաստանը վրայ ու վրայ հասցրեց մահմեդական պետութիւններին, կոտորելով նրանց գոռոգութիւնը և առաջնակարգ պետութիւնների շարքից հանելով վերջնակարգ պետութիւնների շարքը ձգելով: Կովկասի մահմեդականները այսօր էլ Ռուսաստանում ապրելով և ռուսաց հպատակելով հանդերձ, սրտով ու հոգով Պարսկաստանի և Տաճկաստանի հետ են, որոնք որպէս անկախ պետութիւններ, թե ու թիկունք են հանդիսանում նրանց:

Մի ազգ, որ իւր թիկունքին ունի ազգով ու կրօնքով երկու հարազատ պետութիւններ, մի ազգ, որ շնորհիւ իւր մոլեռանդութեան քրիստոնեաների մէջ միշտ իրեն խորթ ու անհաշտ է զգացել և վերջապէս մի ազգ, որ հարազատ մօր զրկից խլուելով խորթ մօր իշխանութեան տակ անցնելու վիշտն ու վէրքը դեռ այնքան թարմ է—անա այդ ազգն է միայն, որ յարմար առիթը ներկայացած պահուն, չի տատանուի զէնք առնելու իրեն շոյող, փայփայող խորթ մօր՝ Ռուսաստանի դէմ, նրանից ազատուելու համար:

Մեր այս կարծիքն ապացուցանող դէպքեր շատ են պատահել, որոնց մասին անշուշտ տեղեակ է Պետերբուրգի կառավարութիւնը: Վերցնենք միմիայն վերջին Ռուս-թրքական պատերազմի շրջանը և զանց առնելով լեռնցիների մէջ տեղի ունեցած խլրտումները, դաշտցիների վարմունքը քննենք: Պատերազմը հրատարակուած լինելով յանուն քրիստոնեաների ազատութեան և մահմեդական թիւրքիայի դէմ, բնականաբար զրգռել էր Ռուսաստանի, մանաւանդ Պարսկաստանի և Տաճկաստանին սահմանակից մահմեդականներին: Նրանք անկարող էին հասկանալու, որ թրքական բարբարոսութիւնները դատապարտելի էին և նրանք վերջ ու առաջ պիտի պատժուէին:

Նրանք չը գիտէին, որ մի պետութեան ապահովութիւնը և բարեկեցութիւնը ժողովրդի մի մասի դէմ բարձարոսական հալածանք սկսելու մէջ չէ. վերջապէս չգիտէին, որ պատերազմի արիւնհեղութեան գործում յանցաւորը Պօլսի կառավարութիւնն էր և ոչ պատերազմող Ռուսաստանը կամ պատերազմի առիթ տուող քրիստոնեաները: «Ռուսաստանը պատերազմ է հրատարակել Թիւրքիայի դէմ, Թիւրքիան, ինչպէս միշտ, այս անգամ էլ պիտի ջարդուի յաղթահարուի և նսեմանայ, որի պատճառը քրիստոնեաներն են» — այս բաւական էր, որ գրգռէր Կովկասի մահմեդականներին դրացի հայերի դէմ: Այս գրգռող սաստկանում էր այնչափով, ինչ չափով որ հայերը նպաստում էին պատերազմի յաջողութեան: Այն հանգամանքը, որ Կովկասեան երեք զօրաբաժինների գլուխն անցած էին հայ գինեւորաներ, կապաղեցնում էր մահմեդականներին: Սակայն մի ինչ — որ հեղինակաւոր ոյժ զսպում էր խուժանի կատաղութիւնը:

Բայց անհանկարծ լուրեր են գալիս Ղարսից, ուր գտնուում է Ռուսաց զլխաւոր բանակը և որպէս լրումն չարիքի, Քիւրդերի զինեալ բանակը կտրելով Տէր-Ղուկասովի հաղորդակցութեան ճանապարհը, պաշարում է Բայազէտը և սպառնում Արարատեան նահանգին:

Մահմեդականները կարծես հաւատալով Թիւրքիոյ զէնքի յաջողութեան, սկսեցին տեղական քրիստոնեաներին ջնջելով թրջական բանակին միանալու բացարձակ պատրաստութիւններ տեսնել: Երևանի հարուստ տներն ու խանութները և նահանգի հարուստ կալուածքները վաղօրօք բաժանուեցին տեղացի մահմեդականների մէջ: Մահմեդական նշանաւոր ընտանիքներ, անդամները, ինչպէս օրինակ Փանահ-խանը, Աբաս-Ղուլի-խանը և ուրիշները ըստ երևոյթին իրենց շատ չեղօք էին պահում, նրանց մասին ոչ խօսք, ոչ կասկած կար: Սակայն բանիմաց հայերից ոչ ոք չէր ուզում հաւատալ թէ նրանց չէզօրութիւնը անկեղծ է, որ նրանք իրենց կորցրած խանական իրաւունքներն ու անկախութիւնը վերստանալու ոսկի երազով չեն օրօրում:

Փակագծի մէջ ասեմ, որ Կովկասի մահմեդականութեան ես երբէք չէի մեղադրի, եթէ՝ առաջինը, Թիւրքիան լինէր մի բարեկարգ, քաղաքակիրթ պետութիւն և նրա ձեռքերը կարմրած չը լինէր հաղարաւոր քրիստոնեաների անմեղ արիւնով և երկրորդ, եթէ նրանք հեռու լինէին դրացի քրիստոնեաներին կոտորելու մտքից: Ոչ մի մահմեդական չի կարող ասել, թէ պատերազմի ամբողջ ընթացքում հայերից մէկն ու մէկը

դրացի և ոչ դրացի մի հատ մահմեդականի վնաս է հասցրել: Գեներալ Տէր-Ղուկասովը Բայազէտը պաշարումից ազատելուց յետոյ էլ, ոչ մի Բայազէզցի մահմեդականի քիթ չարիւնեց, չը նայելով որ նոյն մահմեդականները չը մնացած բարբարոսութիւններ գործել էին Բայազէտի հայերի դէմ, կոտորել, հրդեհել, աւարի մատնել քաղաքը:

Երևանի նահանգի, մանաւանդ քաղաքի մահմեդականները հայերի դէմ այդքան սպառնալից դիրք բռնելուց յետոյ, ի՞նչ էին անում կամ ի՞նչ էին մտածում անել հայերը:

Պէտք է նկատել, որ Արարատեան նահանգը ուսաց ձեռքն անցնելուց յետոյ, հայերն անձնատուր լինելով տնտեսութեան և այլ պարապմունքների և զբալով իրենց բոլորովին ապահով, կամաց կամաց իրենց տներից վերացրին ղէնքերը, որոնց ներկայութիւնը միմիայն մահմեդական տիրապետութեան բարբարոսական օրերն էին յիշեցնում: Մի խօսքով հայը ղէնք չունէր կամ համարեա թէ անգէն էր: Բայց նա լաւ ծանօթ լինելով դրացի մահմեդականների բարբարոսական ընադդներին, յիշեալ սպառնական օրերում, ակամայ ինքնապաշտպանութեան հարցը ծագեց: Ոչ ոքից գաղտնի չէր, որ ամբողջ նահանգում չը կար բաւականաչափ զօրք մահմեդականներին, հարկաւոր ղէպքում, դապելու համար: Որպէս լրումն, չարիքի լեռնցիների կամաւորների մի խումբ արդէն բանակ էր դրել քաղաքից քիչ հեռու, իսկ Ղարաբաղի միլիցիան, որոնց մէջ հայիւր էլ կային, հենց նոր էր մտել քաղաք: Հայերը վճռեցին հետամուտ լինել և շուտով պարզուեց, որ մահմեդական միլիցիայի և քաղաքացիների մէջ ինչ-որ գաղտնի բանակցութիւն է տեղի ունենում: Այդ ժամանակ միայն ինքնապաշտպանութիւնը հայերի համար դարձաւ. կենսական խնդիր: Զինուեց ով ինչով կարող էր: Հին պապենական հրացանները կարգի բերուեցան, պատեանների մէջ ժանդոտած թուր ու սուր սրբուեցին ու սրբուցին: Քաղաքի հայկական մասը թաղերի բաժանուելով ամեն մի թաղ յանձնուեց իւր միջից ընտրուած երիտասարդների պաշտպանութեան, որոնք հերթով, գիշեր ու ցերեկ սկսեցին հսկել քաղաքի վրայ: Տողերիս գրողը, ընկերակցութեամբ պ. Նփրեմ Մամիկոնեանի (այժմ Բագում) և Շամիր Մելիք-Փաշայեանի (այժմ քննիչ) և շատ ուրիշների, մի քանի ցերեկ ու գիշեր դուրս է եկել քաղաքը պաշտպանելու:

Իրերի դրութիւնը այս վիճակի մէջ էր, երբ մի օր առաւօտեան վաղ քաղաքում լուր տարածուեց թէ Ղարսը պաշարող Ռուսական բանակը յետ է քաշուել Ալեքսանդրապօլ, իսկ Բա-

յազէտը պաշարող քիւրդերի բանակը վերցնելով նրա ամրոցը, անցել է սահմանը և արշաւում է Երևանի վրայ... Միւսնոյն օրը կէս օրին Ղարաբաղի մահմեդական միլիցիան կռուի սիգնալը տուեց: Մի ըրպէս խանութները փակուեցան և մահմեդական չայխներէց, խանութներէց ու մզկիթներից դուրս թափուեցին բաւական քանակութեամբ զէնք և դաճանակներ: Խուփանը միլիցիայի հետ միացած յարձակուեց շուկայի վրայ, բայց յետ մղուեց մի բանի կորուստ տալով: Բանը վերջացաւ մահմեդականների կատարեալ պարտութեամբ, տալով 20—25 սպանուածներ և կրկնակի վիրաւորներ: Հայերից սպանուած կամ վիրաւոր չեղաւ, չը հաշուելով մի դերձակի աշակերտ, որի ոտքին գնդակ դիպաւ այն ժամանակ, երբ նա տանիքի վրայ կանգնած նայում էր կռուին:

Եթէ այդ օրը կամ դրանից յետոյ ամբողջ Երևանեան նահանգի և գուցէ միւս թրքաշատ քաղաքների մահմեդական բնակիչները ապստամբութեան դրօշ չը պարզեցին և երկիրը չօղողուեց արիւնով, որը կարող էր մինչև անգամ պատերազմի ընթացքը փոխել—այդ բանում շնորհապարտ պէտք է լինել Երևանի երկտասարդութեան, որի մի խիզախ վարժունքը տակն ու վրայ արեց մահմեդականութեան ծրագիրը:

Այսպէս էր Կովկասի մահմեդականութիւնը, այսպէս է այժմ և այսպէս կը մնայ միշտ, սկսած Արարատի սաորոտներից մինչև Կասպից և Սև ծովի ափերը, մինչդեռ իր թիկունքին կանգնած կը լինի Պարսկաստանը և՛ մանաւանդ Տաճկաստանը:

Պարսկաստանին մեղադրել քաղաքական ոտնձգութիւնների մէջ կարելի չէ: Տաճկաստանն է միայն, որ իւր ոտքերի տակ բարոյական հող չը գտնելով, համիսլամական գաղափարին պինդ կառչած, ոչ միայն մտածում է իւր ողորմելի գոյութիւնն ապահովել, այլ և համիսլամական դրօշակի տակ առնելով մահմեդական խաժամութների բազմաթիւ լէգիօններ, մտածում է վերականգնել իւր անդարձ կորած ոյժն ու փառքը: Եւ այդ ոչ միայն Սուլթան Համիդի փայփայած երազն է, այլ և շատ սակաւ բացառութեամբ բոլոր մահմեդականների, որոնց մէջ առաջին տեղը բռնում է Կովկասի մահմեդականութիւնը: Բացառութիւն կազմում են նրանք, որոնք խորապէս համոզուած են, որ այնպիսի մի պետութիւն, որպիսին է Թիւրքիան և որի գոյութեան նշանաբանն է բարբարոսութիւնը, ոչ միայն չի կարող որևէ մի կտոր նոր հող ձեռք բերել, այլ և կասկածելի է թէ ունեցածը կարող է պահել իւր ձեռքում:

Բազուի մահմեդականների ներկայացուցիչները, որոնք քաղաքային խորհրդարանի դահլիճում ցինիքական ժպիտով մատնացոյց էին անում հայ յեղափոխական կոմիտեների վրայ և փորձում էին իրենց հաւատակիցների գործած գազանութիւնները յիշեալ կոմիտեների գոյութեամբ արդարացնել, Նրեանի մահմեդական ներկայացուցիչները, որոնք նախ նպատակով մատնացոյց էին անում խեղճ Թըքահայ գաղթականներին—նրանք կարծում են չը գիտենք, թէ ի՞նչ է անցնում ու դառնում Կովկասի մահմեդականների մէջ այս վերջին մի քանի տարիներում։ Մեր դրացի մահմեդականները շատ են սխալւում։ Մենք ամեն բան գիտենք, գիտենք, որ վաղուց ի վեր է Կովկասում կազմուած է Համիսլամական կոմիտէ, որի գլուխն անցած են մահմեդական միլիոնատէրերից շատերը, հին անպատիժ կողոպուտները երազող կալուածատէրերը, բէկերն ու խաները, որպէս և մահմեդական ինտելիգէնցիայի մեծ մասը, յանձին հրապարակասոսների, պաշտօնեաների ու ուսուցիչների։ Դիտենք, որ այդ կոմիտէն իւր ցանցերը տարածել է Կովկասի բոլոր անկիւններում, ուր այսօր էլ Թաքնւում և պրօպագանդա են անում Թըքական սոփոսաներն ու ուլիմները։ Դիտենք, որ գաղտնի ու աշկարա խոշոր գումարներ են փոխադրւում Պօլիս, յանուն Մէքքայի երկաթուղու և սյլ կարիքների, որ մեծ քանակութեամբ զէնք ու ռազմամթերք են մատակարարւում մահմեդական ամբոխին։ Դիտենք և այն, որ մահմեդականների ծրագիրն է. օգտուելով բարեպատեհ առիթից, կոտորել, թուլացնել, աղքատացնել հայերին, ապա թէ նոյնքան բարեպատեհ առիթից օգտուելով, պարզել ազատամբութեան դրօշակը...

Անկարելի է հաւատալ, թէ Ռուսաստանի ներքին գործերի դեկը դարձնող նոցին պայծառափայլութիւններն ու գերազանցութիւններն անտեղեակ լինեն Կովկասի մահմեդականների մէջ դարձնուող այդ դաւադրութիւնը։ Բայց հաստատ կարելի է ասել, որ բարձրագոյն իշխանութիւնը ոչինչ չը գիտէ, շնորհիւ այն բանի, որ ամեն բան ներկայացնում են նրան վարդապետն, որպէս վարդապետն ներկայացրել էին Ռուսական բանակի, նաւատորմի, բանակի մատակարարութեան և կարմիր խաչի դրութիւնը։

Բայց թողնենք այն, ինչ որ մեզ անմիջապէս չի վերաբերում, թէ և անուղակի կերպով փնտսում է ամենքիս հաւասար չափով։

Դառնանք մեր նիւթին։

Հայ և մահմեդական տարրերին կողք կողքի դնելով մենք

պարզ տեսանք, որ այդ երկուսից մահմեդականներն են, որ շահաներ ունին սեպարատիզմի: Որ Ռուսաստանից անջատուելով Տաճկաստանին միանալու դադափարի իրականացումը մահմեդականների համար ժամանակի խնդիր է միայն, — այդ մասին մենք բերինք իրական ապացոյցներ, թէև առանց այդ ապացոյցների էլ, տեղական իշխանութիւնը հնարաւորութիւն ունի շատ բան մերկացնելու:

Բայց թէ ի՞նչու փոխանակ մահմեդականների ոտնձու-թիւնների առաջն առնելու, ընդհակառակը միջոց է տրոււմ նրանց հայերի դէմ ելնելու օրը ցերեկով, ոտից գլուխ զինուած և բոլորովին անպատիժ կերպով — այդ արդէն դադանիք է: Այն տարբերութիւնը, որ կայ հայերի և մահմեդականների գործողութիւնների մէջ, այն է, որ մահմեդականները զգալով իրենց նպատակի յանցաւոր լինելը, աշխատում են աչքից հեռու պահել, որին նպաստում է Տաճկաստանի տրամադրութիւնն այս գործում և նրա սահմանակից լինելը: Այնինչ հայերը Ռուսաստանի դէմ ոչինչ չեն ունեցել, ընդհակառակը, մինչև ութսունական թուականները մենք մեր յոյսը դրած ենք եղել Ռուսաստանի վրայ:

Կրկնում ենք, որ այդ թուականից միայն, քրիստոնեաների պաշտպան Ռուսաստանի և քրիստոնեայ հայ ժողովուրդի միջև, շնորհիւ անբարեխիղճ մարդկանց, սև կատու անցաւ: Այդ թուականներից սկսուեց հայկական հալածանքը. հալածանք դպրոցների դէմ, հալածանք մարդասիրական, բարեգործական և հրատարակչական ընկերութիւնների դէմ, հալածանք հայ մամուլի ու գրականութեան դէմ, հայ կրօնի ու եկեղեցու դէմ, վերջապէս հայ մարդու դէմ, որ յանդգնութիւնն էր ունեցել հայ ծնունդու և աւելի մեծ յանդգնութիւն — հայ մեռնելու: Այդ թուականներից սկսած խլոււմ է, ինչ որ կարելի է խլել, փակոււմ ինչ որ կարելի է փակել, կործանելին կործանոււմ է, կրճատելին կրճատոււմ և մնացածն էլ ամուր կերպով սեղմոււմ բացառական օրէնքների անողոք օղակի մէջ: Միանգամայն մոռացութեան է տրոււմ այն, որ հայը Կովկասի նուաճման գործում մեծ դեր է կատարել, որ նա թշնամու երկրի դռները բացել է նրա առաջ, բացել է և իւր գիրկը խաղով ու խաչմառով: Մոռացութեան է տրոււմ Ռուսաց նշանաւոր քաղաքների շնորհած արտօնութիւնները, նրանց հրովարտակները և վերջապէս 16 յօդուածը, որ ազատաբար Կայսեր կողմից որպէս վարձաարութիւն շնորհուեցաւ հային: Այս բոլորը մոռացուելուց, Լեւոս գետը ձգուելուց յետոյ, Պետերբուր-

զը յանձին իւր մինիստրի բաց է ի բաց ասում է թող ջնջուին հայերը, որովհետեւ Հայաստանը մեզ պէտք է առանց հայերի» և թոյլ է տալիս, որը Թիւրքիան ընաշինջ անէ հային իւր բնիկ երկրում իւր պապերի օճախի մէջ: Այս դեռ բաւական չէ. Օսմանեան բարբարոսների սրից ազատուած թշուառները երբ դիմում են Կովկաս, այստեղ նրա դէմ յարուցանում են նորանոր արգելքներ, նորանոր նուաստացումներ: Այս բոլորից յետոյ հակակառավարական ցոյց է նկատուում այն, որ տեղական հայերը, մարդասիրական և եղբայրսիրական զգացումից թիւադուրուած շտապում են օգնութիւն հասցնել իրենց մերկ, քաղցած ու թշուառ արիւնակիրներին...

Շատ բնական էր, որ այս բոլորը հայերի մէջ դժգոհութիւն յառաջ բերէին: Իսկ երբ էջիածինը ամբաստանուեց, եկեղեցական կալուածքները դաւաճեցին—այլեւս ուրիշ բան չէր մնում անել հային, եթէ ոչ դիմադրել այդ բոլոր հալածանքներին զրկանքներին ու գրաւումներին:

Բայց կոռուիով հանդերձ, ոչ մի հայի մտքից չի անցել անկախ թագաւորութիւն ստեղծելու գաղափարը, ոչ մի հայ չի մտածել հայկական թագ դնելու Տիգրանների ու Տրդատների գլխին: Ո՛չ, Հայը բաւական փորձուած է. նա լաւ գիտէ թագի ծանրութեան աստիճանը: Սակայն նա հայ ծնունդով, ուղոււմ է, որ հայ էլ մեռնի. նա պահանջում է, որ յարգուին իւր ազգային իրաւունքները, որ վերջ դրուին իւր լեզուի, իւր կրօնի ու եկեղեցու դէմ յարուցուած հալածանքներին. նա ձգտում է ձեռք բերել այնպիսի իրաւունքներ, որ հնարաւորութիւն ունենայ կիանքի մէջ և իւր երկրի ու պետութեան մէջ իր արժանաւոր տեղը գրաւելու: Հայը չի ուզում միայն ռուսահպատակ մնալ, որ կէս ստրկական մի վիճակ է, այլ ուզում է լինել Ռուսաստանի քաղաքացի այս բառիս ամենալայն մտքով: Վերջապէս հայն պահանջում է այն, ինչ որ պահանջում է ամեն մի ռուս քաղաքացի: Եւ այս բոլորի մէջ չը կալ ոչ միայն սեպարատիզմ այլ և հակակառավարչական որեւէ տենդենցիա. ընդհակառակը տալով հային այն ինչ որ նրա արդար իրաւունքն է, կը նշանակէ հաղորդակից անել Ռուսաստանի թէ կոլտուրական և թէ տնտեսական գործին:

Ասած է. հալածել կը նշանակի տարածել. իսկ վերջին տարիներում Ռուսաստանի հայերի կրած հալածանքները ոչնչով չէին տարբերուում Թիւրքիայի հայերի կրած հալածանքներից: Կովկասի և Թիւրքիայի հայերի վիճակի մէջ եղած տարբերութիւնը կոտորածի մէջ էր: Փետրուար 6-ին այդ պահասն էլ լրացաւ:

Այս իսկ ըրպէին, երբ գրում եմ սոյն տողերը, Բագուի և Երևանի նահանգներում խաղաղութիւնը դեռ չի վերականգնել, իսկ միւս նահանգներում ուր կան մահմեդականներ, կոտորածի սպառնալիքը դամոկլեան սրի նման կախուած է ամենքի գլխին։

Սարսափը տիրում է ամենքին և այդ սարսափը մեծանում է այն չափով, որ չափով ժողովուրդը հասկանում է մահմեդականների գաղտնի նպատակը։ «Русское Слово»-ն արտասահմանեան թերթերից առնելով հաղորդում է այն, որի մասին մենք վերը խօսեցինք—այն է Թիւրքիան մտածում է Կովկասը յափշտակել տեղական մահմեդականների աշակցութեամբ։ Որովհետև մենք ամբողջին անուանեցինք մի գործիք, ուստի տեղական մահմեդականներ ասելով մենք ամենէին ամբողջին ի նկատի չունինք, այլ Թիւրքիայի հետ վաղուց ի վեր սերտ յարաբերութիւն ունեցող մահմեդական տուգբերին, ինտելիգենցիային և այն բոլոր պսնվտի—ուսուֆիներին, որոնք գաղտնի կամ աշխարայ իրենց ծառայութիւնն են առաջարկում ընդդէմ յեղափոխական հայերի... Եւ իբր թէ Թիւրքիայի համար այդ Կովկասական ծրագիրը կազմել է Գեորգիան։ Չը պէտք է մոռանալ, որ անցեալ տարի, ճիշտ այս ամիսներում միևնոյն յանցանքի մէջ մեղադրուեցաւ Անգլիան և որքան յայտնի է մեզ, կառավարութիւնը Թիւրքիայի դէմ ինչ-որ միջոցներ էլ ձեռք առաւ։ Ով էլ ուզում է լինի Թիւրքիային խորհուրդ տուողն—այդ միևնոյնն է, բաւական է, որ Երզնգ Գէօսկում Կովկասի վերաբերմամբ մեծ ախորժակ ունին և ներկայ ըրպէն երբ Ռուսաստանը ներքուստ ու արտաքուստ դժուարութիւնների մէջ է, իսկ հայ ժողովրդի վարկը ընկած—յարմարագոյնն է համարուում։

Իսկ մենք թոյլ ենք տալիս մեզ գուշակելու, որ եթէ Թիւրքիան, ում խորհրդով էլ կուզի, թող լինի, յիմարութիւն ունենայ Կովկասի վրայ արշաւելու, նա ոչ միայն չի կարող Կովկասից մի թիզ հող գրաւել և իւր ձեռքում պահել, այլ ընդհակառակը նա կը կորցնի ամբողջ Մակեդոնիան ու Արաբիան, իսկ Անգլիան չի յապաղի Կ. Պօլսում տեղաւորուելու այնպէս, ինչպէս տեղաւորուեց Եգիպտոսում։

Բայց Թիւրքիայից, որպէս մահմեդական պետութիւնից (Պարսկաստանի մասին մեր կարծիքն ուրիշ է) ամեն տեսակ յիմարութիւն սպասելի է։ Ուրեմն մենք կանգնած ենք կրկնակի պատմական ըրպէսների շէմքին, մէկը՝ որ փչում է Ռուսաստանից խոստանալով կեանք, ազատութիւն, միւսը՝ որ փչում է Թիւրքիայից սպառնալով ստրկութիւն և մահ։ Ահա այս պատ-

մական ըրպէս, Կովկասի քրիստոնեայ ազգերը—հայ և վրացի շատ պատասխանատու դեր ունին կատարելու Ճաշակած լինելով մահմեդական լծի ծանրութիւնը, ձեռքները ծալած նըստել չեն կարող. Բր հայը կամ վրացին չը գիտէ, որ Ռուսաստանի հպատակների վրայ ծանրացած շղթան ժամանակաւոր և անցողական է։ Ռուս լաւագոյն քաղաքացիների հետ միասին հայերն ու վրացիները նոյնքան խորին կերպով հաւատում են Ռուսաստանի վերածնութեան և լաւնաժաւ պետութիւնը ամբողջացնող ազգերի ու ցեղերի այն վարդապետ յոյսերի իրականացման, որպիսի յոյսեր տաճել են նրանք դէպի քրիստոնեայ Ռուսաստանը հարիւր տարիներ առաջ և որպէս զի Կովկասի դռները աւելի լայն բացուէին Ռուսական տիրապետութեան առաջ, չեն խնայել նրանք ոչ իրենց գանձը, ոչ արիւնը... Շատ ճիշտ է «Рус. Слово»-ի փոխառաքար առաջ բերած այն կարծիքը թէ հայերը պատրաստ են կոռելու Օսմանեան յառաջխաղացութեան դէմ դէպի Կովկաս։ Եթէ նոյն իսկ այլևայլ պատճառով զլացուի հային զինուելու արտօնութիւնը, նա բան ու կացինով էլ կը կռուի թրքական արշաւանքի դէմ և կը կռուի մինչև իւր վերջին շունչը, իւր երակների վերջին կաթիլ արիւնը։ Որպէս զի միանգամ էլ Թիւրքիան իւր անարգ ոտքը կոխի Կովկասի շէմքին և զգուելի կիսալուսինը պարզի Արարատեան երկրի ու Միւնիքի վրայ—նա պէտք է անցնի Կովկասահայերի դիակների վրայով։

Նոյնը անկասկած կանի նաև վրացին։

Ի հարկէ այս ենթադրութիւնը կարող է իրականանալ այն ժամանակ միայն, եթէ շարունակուի մահմեդական տարրին հայերի դէմ ըըս տալու ամեն տեսակէտից կորստարեք քաղաքականութիւնը, մի քաղաքականութիւն, որ առաջ բերեց Բագուի և Երևանի կոտորածը։ Այդ քաղաքականութիւնը, որի գոյութեան դժուար է տարակուսիլ, այն հետեանքը կունենայ, որ Սուլթան Համիդի գործակալները հնարաւորութիւն կունենան մի գնդակով երկու որս անելու—ջնջել հայ տարրը, որպէս մի լուրջ խոչնդոտ, և ապա Կովկասը իւր գեղեցկութիւններով ու գեղեցկուհիներով յանձնել Սուլթանին ու նրա պորտաբոյծ փաշաներին։

Յօդուածս վերջացնելուց առաջ, ընթերցողների ուշադրութիւնը պիտի հրաւիրեմ մի այլ բնորոշ երևոյթի վրայ։

Ասացի որ Կովկասի հայերն էլ եթէ տրամադիր լինէին ոչխարի նման մորթուելու, նոյնքան մեծ զոհ կը տային, որքան թրքաց Հայաստանում։

Բագուի արիւնալից դրամայի դժոխային տեսարանները առանձին-առանձին քննելով, մարդս գալիս է այն եզրակացութեան, որ վայրենութեամբ զինովցած մահմեդական սև հարիւրակի արեան ծարաւը տասնաւոր կամ հարիւրաւոր հայերի արիւնով չը պիտի յագենար, որ մոլեգնած ամբոխը քաղաքը պիտի խեղդէր հայ արիւնի մէջ, եթէ լուրջ արգելքի չը հանդիպէր:

Բայց Պրն էր այդ արգելքը...

Մամուլի տուած արժանահաւատ տեղեկութիւններին նա-յելով, Բագուի քաղաքային վարչութիւնը արիւնհեղութիւնը դադարեցնելու ոչ մի փորձ չարեց, ընդհակառակը կարծես թէ այդ արիւնհեղութիւնը նրան ինչ-որ գաղտնի հրճուանք էր պատճառում:

Ոստիկանութիւնը իբր թէ անզօր էր ընդհարումի առաջն առնելու, թէև ըստ լրագրական տեղեկութիւնների, նա աչք էր խփում այնտեղ, ուր հայերը մորթւում էին, ընդհակառակը ամենայն հոգով զինաթափ էր անում ամեն մի պատահած հայի...

Զօրքը նոյնքան անզօր է գտնուել, կարծես հրաւիրուած է եղել բարբարոսական կրկէսին հանդիսատես լինելու և ամբոխի վայրագութիւնը ծափահարելու...

Իսկ ինչ վերաբերում է նահանգապետին, նա կատարում էր իւր պարտքը, շրջում էր արիւնաներկ ու միացող փողոցներով, լսում յօշոտողներին ու մորթողներին աղեխարշ ձիչ ու աղաղակները—բայց անզօր էր, իրեն դիմողներին, իրեն ապաւինողներին զենքերալական լրջութեամբ պատասխանում էր, որ դեռ հրահանգ չի ստացել...

Ո՞ւմ կարող էին դիմել վայրենի ամբոխի կատաղութեան մատնուած հայերը:

Հայակեր ամբոխի վայրենի յարձակումը ինչո՞վ կարող էր կանգ առնել, զսպուել:

—Ամենքից լքուած, ճակատագրի կամքին թողուած հայերի ինքնապաշտպանութեամբ:

Այո, հայերի ինքնապաշտպանութիւնը կանգնեցրեց ամբոխի վայրենութիւնը, մի բան, որին երևի չէր սպասում ոչ մահմեդական խուժանը և ոչ խուժանին պատրաստող, զինող և հրահանգողները:

Կոտորածի առաջին օրերում հայերի բռնած պասսիւ դիրքը պէտք է բացատրել նրանով, որ ոչ մի հայ չէր ցանկանայ զէնք առնելու մահմեդականների դէմ, խոր անդունդ բանալով

իւր և դրացու միջև: Մահմեդական դրացու հետ կռուելու մէջ հայը ոչ մի շահ չունէր, մանաւանդ ներկայ պատմական ռուպէ-ում, երբ վիճակակից ցեղերի համախմբումը, միացումը այնքան անհրաժեշտ է: Ձէ՞ որ մինչև այդ օրը հայերից շատերը չը գիտէին մահմեդականների յետին միտքը և խորապէս համոզուած էին թէ շատ ու քիչ բանիմաց մահմեդականներից մեծ մասը, Կովկասի միւս ազգաբնակութիւնների հետ միասին, ձգտում են հասնել ընդհանուրի համար միակ ցանկալի նպատակին: Սակայն անողորմ կոտորածի շարունակութիւնը, ամբոխի ոտքից գլուխ ղինուած լինելը և կարգը, խաղաղութիւնը վերականգնելու բացակայութիւնը թէ իշխանութեան և թէ մահմեդականների ներկայացուցիչների կողմից, հայի գլխում ծագեց այն աղօտ կասկածը թէ, այս կոտորածի մէջ ինչ-որ գաղտնիք կայ, որ ամբողջ որպէս գործիք ի կատար է ածում ում-որ նպատակը և որ իւր պատիւ դիրքը առաջ պիտի բերի աւելի ողբալի հետևանք, քաջալերելով վայրենի ամբոխին: Եւ հայը զէնք առաւ: Ի բաց Աւետարան քո մարդասիրական, խաղաղասիրական բարձր գաղափարներով, «ազն ընդ ական և ատամն ընդ ատաման»... Ու օրհասականի մատնուած, ամենքից լքուած հայը վճռեց դիմել ինքնապաշտպանութեան զէնքի միջոցով: Նա էլ սկսեց կոտորել, ջարդել, փշրել մահմեդական խուժանի նման: Կեանքի քաղցրութիւնը, որ կախուած էր մահմեդական ամբոխի քմահաճոյքից, նրան էլ ոգևորեց, արիւնը նրան էլ գինովցրեց: Հայի մէջ դարձնած դադանը, որ ճնակուած է ամենաբարձր քաղաքակրթութեան հասած մարդկանց և ազգերի մէջ և չի յապաղում որոշ պայմաններում դարձնելու իւր կրօնի ամբողջ թափով, այո՛, այդ դադանը մղեց հային դէպի եղբայրասպան կռիւ: Չը նայելով որ Բագուի հայը գտնուած էր երկու կրակի մէջ, չը նայելով որ ըստ լրագրական տեղեկութիւնների, ոստիկանութիւնը և զօրքը աչալուրջ հսկում էին հայերի բոլոր շարժումներին, շատ անգամ արգելք դառնում նրա ինքնապաշտպանութեան, այնուամենայնիւ, դարձեալ նոյն լրագրութեան ասելով, բաւական էր լինում, որ մի հինգ-վեց ղինուած հայեր երևային փողոցում և հարիւրաւոր հոգուց բաղկացած մահմեդական խուժանը անմիջապէս ծակէծակ էր փախչում:

Մահմեդական խուժանի այս ձևի անարգ փախուստը մենք չենք վերագրում նրա վախկոտութեան, թուլամորթութեան, այլ այն բանին, որ նա հայերին կոտորելու մէջ իւր անձը զոհ բերելու որևէ լուրջ պատճառ չէր գտնում, որ նա անտեղեակ էր

այն յետին մտքերին, որոնցով առաջնորդուում էին իրեն՝ ամբողջին եղբայրասպան կռուի մէջ նետողները:

Երբ փոխուում են դերերը, երբ հայերն սկսում են յարձակողական գիրք բռնել և կոտորածներ են անում,—տեղի է ունենում ամեն մի լուրջ մտածողին զարմանք բերող զուգադիպութիւն.—այն է ամենայն փութով Բագու է ուղարկւում Շէյխ-Իւլ-Իսլամը. նահանգապետը ստանում է մինչև այդ րօպէն չունեցած հրահանգը. խուժանի յարձակումները դադարացնելու անգոր համարուած ոստիկանութիւնն ու զօրքը այժմ անգոր չեն գտնուում իրենց ռազմական ամբողջ ոյժով խեղտելու անկարգութիւնը. քաղաքային խորհրդի մահմեդական անգամները դուրս են գալիս իրենց թագստից և կոկորդիլոսի արցունքով վճռում թափոր կազմել, փողոցն փողոց շրջել, թէկուզ այդ բանը զոհ էլ պահանջէր իրենցից, շատ լաւ գիտնալով որ եթէ զոհուող իսկ լինէր, նա չէր լինի մահմեդական, այլ քրիստոնեայ, մանաւանդ հայ:

Ինչևիցէ այդ կասկածելի զուգադիպութեան շնորհիւ կարգը վերականգնում է. մահմեդականները գրկում են հայերին և Յուդայի համայնքը տալիս: Հաշտութեան լուրը տարածւում է քաղաքի մէջ, դրացիական և եղբայրական քաղցր սիրոյ քարոզներ են խօսուում և կոչ է տրւում բոլոր քաղաքների հոյեբին ու մահմեդականներին չընկնել սատանայի սարքած որոգայթի մէջ, միմեանց արիւն չը թափել...

Սակայն այդ կոչը, նոյն իսկ Շէյխ-Իւլ-Իսլամի այնքան յուզիչ քարոզները ամենևին արգելք չը դարձան Երևանի չայ-չիխանաների լօթիներին ընդհարուելու հայերի հետ առանց որևէ շարժառիթի: Միայն թէ մահմեդական խոփը այստեղ քարին առաւ Բագուի դէպքից խրատուած Երևանցիք գիտէին իրենց կեանքը արժան չը ծախելու մեծ առաւելութիւնը, մի բան որ խիստ զարմացրեց մահմեդական լօթիներին առաջ մղող մութ անձնաւորութիւններին, որոնք շտապեցին խաղաղութիւն կնքել:

Որովհետև բաւական պարզուած էր, որ մահմեդական յարձակումների մէջ կայ որոշ միտք, որոշ նպատակ, որ այդ յարձակումները պատահական չեն, այլ կազմակերպուած, ուստի հաշտութեան անկեղծ և վերջնական լինելուն ոչ մի հայ չը հաւատաց և չի հաւատում: Դա մի ժամանակաւոր զինադադար էր, որ առաջարկեցին մահմեդականները, որպէս զի ապագայի համար լաւ պատրաստուեն, լօթիներ թիւը մեծացնեն... Մեզ հասած մասնաւոր լուրերին նայելով, Երևանի առաջին անյա-

Ղող դէպքից յետոյ, զանազան ապրանքների պատրուակի տակ մեծ քանակութեամբ զէնք և ռազմամթերք է մտել Երևան և նրա նահանգը և կազմակերպուած խմբերի ձեռքով բաժանուել մահմեդականներին թէ գիւղերում և թէ քաղաքներում: Պնդոդներ էլ կան, որ զէնք ու ռազմամթերք ներս է մտել նաև Տաճկաստանից, որտեղից զէնք մատակարարելը շարունակուում է մի քանի տարի: Մենք տրամադիր էինք չը հաւատալու այդ չապացուցուած լուրերին, սակայն հետագայ դէպքերը ինքնըստինքնան ապացուցանում են դրանց ճշմարտութիւնը: Նախիջևանը ենթարկուեց կոտորածի ու թալանի լաւ զինուած և վաղօրօք պատրաստուած մահմեդականների կողմից: Կոտորածն այնտեղ համեմատաբար աւելի սարսափելի եղաւ այն պատճառով, որ թուով այնքան սակաւ հայերը զոհ գնացին բացարձակ խաբէութեան: Նախիջևանի մահմեդականութեան համար յաջող դէպքից յետոյ համիսլամական դրօշակը կէս-պարզուած կարելի էր համարել: Քաջալիքուած խուժանը իւր հաշիւը Նախիջևանի հետ վերջացնելուց յետոյ յարձակուում է գիւղերի վրայ կամ աւելի ճիշտ ասած սիգնալի սպասող մահմեդական գիւղացիները կարճ ժամանակուայ ընթացքում մի մարդու նրման զինուելով ու երնելով սկսեցին հայ գիւղերը թալանել, այրել ու կոտորել:

Կարելի է հաստատ ասել, որ մահմեդականները պիտի հասնէին իրենց նպատակին, Օսմանեան դրօշակն աւելի լայն պիտի պարզէին, եթէ չը լինէր Երևանի դէպքը: Երևանցիք այս անգամ էլ հզօր ընդդիմադրութիւն ցոյց տուին, մինչև անգամ ըստ հեռագրական տեղեկութիւնների, բանը այնտեղ հասցրին, որ յարձակում սկսող մահմեդականները ծակուծուկ փախան և մի քանի օր շարունակ չէին համարձակուում իրենց քիթը փողոցներում ցոյց տալ: Կատարուեց ճիշտ այն, ինչ որ տեղի էր ունեցել Ռուս-թրքական պատերազմի ժամանակ և համարեա թէ միևնոյն պայմանների մէջ, որով և այս անգամ էլ քանդուեց մահմեդականների փայփայած ծրագիրը:

Բայց հարցը այս կամ այն ծրագրի քանդուելու մէջ չէ, այլ այն բանի մէջ, որ երկու տարբեր ժամանակներում, սակայն աննշան տարբերութեամբ նոյն պայմանների մէջ կրկնուած այս երևոյթը ինքնըստինքնան մի հզօր, անհերքելի ապացոյց է թէ ինչ յետին մտքեր ունեցել են մահմեդականները տասնեակ տարիներ առաջ, նոյն միտքն ունին և այսօր, նոյն իսկ տասնեակ տարիներ յետոյ էլ, քանի որ Թիւրքիան կը մնայ Թիւրքիա:

Մի ուրիշ աչքի ընկող հանգամանք ևս:

Երբ տեղի ունեցաւ Երեւանի վերջին արիւնահեղ դէպքը, Բագուի մահմեդական ժողովրդի մէջ մի անասելի իրարանցում ընկաւ, իսկ քաղաքային վարչութեան մահմեդական ձայնաւորները, գլուխ ունենալով քաղաքագլխի պաշտօնակատարին, այնպէս գլուխները կորցրին, որ չը նկատեցին իսկ թէ այդ իրարանցումով դիմակալութիւն են լինում, թէ անդիտակցարար մատնում են իրենց, որ ինչ որ տեղի է ունեցել, վաղօրօք յայտնի է եղել իրենց, միայն թէ Երեւանում տեղի չունեցաւ այնպէս, որպէս իրենք կը ցանկային. այսինքն Երեւանի մահմեդականները չը կարողացան Երեւանի փողոցները ներկել հայ արիւնով, որպէս արին Բագում ու Նախիջևանում: Զէ որ հայերին ջարդելուց յետոյ կոկորդիլոսի արցունք թափելը խիստ սազ է գալիս մահմեդական բնաւորութեան:

Ով որ շատ ու քիչ տարակուսում է մեր ասածի ճշմարտութեան, թող կարդայ Բագուից Երեւան պ. Մելիք-Աղամալեանին խփած հեռագրները, որոնք ոչ միայն լիքն են անվայել բառերով վերջինիս հասցէին և սպառնալիքներով հայերի հասցէին, այլ և այդ թափանցիկ հայոյանքների ու սպառնալիքների ետև շողշողում է հեռագրների հեղինակների հոգեկան վրդովումը և յուսահատութիւնը, որ յանդուգն Երեւանցիք քանդեցին իրենց կառուցած շէնքը:

Այս բոլորից յետոյ Կովկասի հայերին ու վրացիներին մի բան է մնում անելու, այն է պատրաստ լինել որպէս զի յանկարծակիի չգան թէ իրենք և թէ իրենց սիրելի հայրենիքը: Զինուել անհրաժեշտ է ինքնապաշտպանութեան համար և ոչ երբէք նախադրածակ լինելու համար: Նախադրածակ լինել կը նշանակի պատմութեան և ապագայ սերնդի առաջ սև երես մնալ: Զէնքի սպառնալիքով պահպանել խաղաղութիւնը. զէնքի ոյժով կասեցնել յանցաւոր միտումներ — սա ժամանակի պահանջ է: Պէտք է միշտ մտքում ունենալ մեր պապերի այն բնորոշ և իմաստուն առածը թէ «... հետ բարեկամացիր, բայց փայտը ձեռքիցդ ցած մի դնիր»: Այո, պէտք է հաշտուել մահմեդական դրացիների հետ, մինչև անգամ մեծահոգութեամբ պէտք է ներել ներանց գործած բարբարոսութիւնները. այնուամենայնիւ խաբէութեան զոր չը պէտք է դառնալ: Պէտք է աշխատել, որ մեր դրացի, հայրենակից մահմեդականները սթափուին վայրենութեան գինովութիւնից և հասկանան, որ հայերի դէմ սպառնալից դիրք բռնելով, մինչև անգամ նրանց բնաջինջ անե-

լով (եթէ նոյնիսկ յաջողուի իրենց այդ) նրանք Սուլթան Համիդին չեն կարող հասցնել նրա երազած նպատակին, այլ ընդհակառակը խոչնդոտ կը հանդիսանան Կովկասի խաղաղ զարգացման գործին, որ հաւասարապէս ցանկալի է ամենքին անխտիր: Այն բոլոր Կովկասցիք, որոնց համար հաւասարապէս սիրելի է իրենց հայրենիքը, առանց ազգի ու կրօնի խտրութեան, պէտք է աշխատեն դիմակաթափ անելու նրանց, որոնք օգտուելով ներկայ ձախող հանգամանքներէ, բորբոքում են խուժանի կրքերը և սպանութիւններով, կողոպուտներով ու խառնակութիւններով խոր անդունդ են բացանում մեր երկրի քաղաքակրթութեան և բարօրութեան ճանապարհի վրայ: Այս պէտք է դիմակաթափ անել Կովկասի անհաշտ թշնամիներին, լինեն նրանք ինչ ազգից էլ կուզեն. լինեն նրանք կալուածատէր բէկեր կամ խաներ, հանքարդիւնաբերող ինտելիգէնտներ կամ համալսեր, լրագրական գործիչներ և կործանիչներ, հոգեւորականներ, ուսուցիչներ և այլն և այլն: Ժամանակը պահանջում է ազգերի համերաշխութիւն, սէր, եղբայրութիւն և ոչ թշնամանք ու պառակտում: Ժամանակը պահանջում է մոռացումն ամեն տեսակ հին հաշիւների, և իդէալական անկեղծութեամբ ու անշահասիրութեամբ նուիրուել այն խոշոր շինարար գործին, որ Կայսերական զահից խոստացուել է Կովկասին և որի իրականացման գլուխ է կանգնել Կովկասի Փոխարքան:

Ձեռք ձեռքի տուէք, աջակցեցէք ադնիւ մարդկանց, հնարաւորութիւն տուէք մեր սիրելի հայրենիքին, որ կարողանայ ապագայում աշխարհի առաջ պարծենալ նրանով, որ կարող է բարձրագոյն իդէալներով օժտուած սերունդ արտադրել...

Այլապէս, վայն եկել տարել է ամենքին, քանզի բարբարոսութիւնը կուզէ թագաւորել Կովկասում:

MARS